

Եվրոպայի վայրի բնության և բնական
միջավայրի պահպանության
մասին կոնվենցիա



Բողոքի ձևանմուշ

Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն

Ժողովրդավարական մասնակցության վարչություն

Եվրոպայի խորհուրդ

F-67075 Ստրասբուրգ, Cedex, էլ. հասցե՝ Bern.convention@coe.int

Անուն՝ Անդրեյ

Ազգանուն՝ Ռալֆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի, «Հայաստանի անտառներ» ՀԿ-ի, «Կանաչ Հայաստան» ՀԿ-ի, «CEE Bankwatch» ցանցի անունից

Հասցե՝ 49/2 Հանրապետության փ.

Քաղաք՝ Երևան

Փոստային ինդեքս՝ 0010

Երկիր՝ Հայաստան

Հեռ.՝ +359884268552

Ֆաքս:

Էլ. հասցե՝ alibotush@gmail.com

Վեբկայք՝ www.ecolur.org

Ամիսաթիվ՝ 18.03.2020

Էլեկտրոնային ս...

1. Խնդրում ենք նշել ձեր բողոքի պատճառը (խնդրում ենք նաև նշել ներառված Պայմանադիր կողմ/եր/ին և Կոնվենցիայի հողվածները, որոնք հավանաբար խախտվել են:

ՀՀ կառավարությունը խախտել է Բեռնի կոնվենցիայի 4-րդ հողվածի 1-ին և 2-րդ կետերը, 5-րդ և 6-րդ կետերը՝ տալով թույլտվություններ Ամուլսարի ոսկու նախագծին և թույլ տալով նշանակալից ազդեցություն Մշտական հանձնաժողովի 4-րդ բանաձևով (1996թ.) և 6-րդ բանաձևով (1998թ.) պաշտպանվող բնակմիջավայրերի և տեսակների վրա: Նախագիծն արդեն իսկ տեղակայված է և ունի ազդակիր տարածքներ Էմերալդի «Ջերմուկ տարածք»-ում (AM000009), իսկ հետագայում կարող է նշանակալից ազդեցություն թողնել այլ Էմերալդ տարածքների վրա՝ «Սևան» ազգային պարկ (AM000002) և «Գորհայք տարածք» (AM000002). բոլոր երեք տարածքները Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողովի կողմից ստացել են ԲՀՀՏ-ի թեկնածուի կարգավիճակ:

ՀՀ կառավարությունը անտեսել է Էմերալդ տարածքների վրա ազդեցություն թողնող ծրագրերի գնահատման ընթացակարգերը՝ չիրականացնելով պաշտպանության ենթակա տեսակների և բնակմիջավայրերի պաշտաճ գնահատում, իսկ ՇՄԱԳ

հաշվետվություններում կիրառված են մեթոդաբանություններ, որոնք խախտում են Բեռնի կոնվենցիան և անհամատեղելի են Էմերալդ ցանցի հետ:¹

Ամուլսարի ոսկու նախագծի շինարարական փուլը 70%-ով ավարտվել է: Նախագծով նախատեսվում է մետաղական հանքաքարի արդյունահանում բացահանքերից և ցիանիդի միջոցով ոսկու կորզում կույտային տարրավազման հարթակում: Նախագիծն արդեն վնասել է Էմերալդի տարածքները՝ աղտոտելով Արփա գետը² և կարող է ավելի շատ վնաս հասցնել տեսակներին և բնակմիջավայրերին՝ աղտոտելով այն ջրերը, որոնք թափվում են երեք թեկնածու ԲՀՀՏ՝ ներառյալ ջրամբար, որը ջուր է մատակարարում Սևանա լիճ:

Շինարարությունը մեկնարկել է 2016թ.³, բայց 2018թ. հունիսից ի վեր շինարարությունը կանգնեցվել է տեղի բնակիչների կողմից՝ հանք տանող ճանապարհները փակելու միջոցով: ՀՀ կառավարությունը պետք է չեղարկի բնապահպանական և շինարարական թույլտվությունները, որպեսզի խուսափի Էմերալդ տարածքներին պատճառվելիք հետագա վնասից: Մինչ այդ չեն կարող իրականացվել մեղմացման և շտկման միջոցներ:

2. Բեռնի կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված կոնկրետ ո՞ր տեսակ/ներ/ը կամ բնակմիջավայր/ներ/ն են հավանական ազդակիր:

Բնակմիջավայրեր (EUNIS կոդեր)՝ ընդհանուր առմամբ 1946 հեկտար ծրագրով ենթադրաբար ընդգրկված տարածք

E1.11 Եվրո-սիբիրական խոտային համակեցություններ քարային փլվածքների վրա, E2.3 Լեռնային խոտհարքային մարգագետիններ, E3.3 Ենթամիջերկրածովյան խոնավ մարգագետիններ, E3.4 Թաց և խոնավ էվտրոֆ և մեզոտրոֆ խոտային համակեցություններ, E4.3 Ալպյան և մերձալպյան խոտային համակեցություններ թթու հողերի վրա, E5.4 Խոնավ բարձրախոտային կամ պտերային անտառի եզրեր կամ մարգագետիններ, F9.1 Ափամերձ թփուտներ, G1.11 Ափամերձ ուռենու անտառներ, H1 Քարանձավներ, H2.3 Թթվային սիլիցիումային բարեխառն-լեռնային գոտու քարացրոններ, H3.1 Թթվային սիլիցիումային ժայռեր:

Տեսակներ

Կաթնասուններ. Կովկասյան ընձառյուծ (*Panthera pardus saxicolor*), Գորշ գայլ (*Canis lupus*), Բեզուարյան այծ (*Capra aegagrus*), Ջրասամույր (*Lutra lutra*), Սովորական լուսան (*Lynx lynx*), Գորշ արջ (*Ursus arctos*), Խայտաքիս (*Vormela peregusna*), Սովորական երկարաթև չղջիկ (*Miniopterus schreibersii*), Սրականջ գիշերաչղջիկ (*Myotis blythii*), Եռագույն գիշերաչղջիկ (*Myotis emarginatus*), Հարավային պայտաքիթ (*Rhinolophus euryale*), Մեծ պայտաքիթ (*Rhinolophus ferrumequinum*), Փոքր պայտաքիթ (*Rhinolophus hipposideros*), Մեհելիի պայտաքիթ (*Rhinolophus mehelyi*), Հայկական մուֆլոն (*Ovis orientalis*)՝ ունի խոցելի կարգավիճակ ԲՊՄՄ կարմիր գրքի համաձայն:

¹ <https://bankwatch.org/publication/biodiversity-offsetting-and-other-problems-of-the-esia-of-amulsar-gold-project-in-armenia>

² http://www.cao-ombudsman.org/cases/document-links/documents/CAOCompliance_MonitoringReport_Lyidian_Armenia-01and02_10022018.pdf

³ <https://www.lyidianinternational.co.uk/news/2016-news/330->

Թռչնատեսակներ. Երկնագույն Ալկիոն (*Alcedo atthis*), Գեղանի Կոուսկ (*Anthus campestris*), Սովորական Այծկիթ (*Caprimulgus europaeus*), Մարգահավ (*Crex crex*), Սիրիական Փայտփոր (*Dendrocopos syriacus*), Այգու Դրախտապան (*Emberiza hortulana*), Սովորական Շամփրուկ (*Lanius collurio*), Սևաճակատ Շամփրուկ (*Lanius minor*), Անտառային Արտույտ (*Lullula arborea*), Կապտափող Սոխակ (*Luscinia svecica*), Կարմրակտուց Ճայ (*Pyrrhocorax pyrrhocorax*), Ճուռականման Շահրիկ (*Sylvia nisoria*), Կարմիր Բաղ (*Tadorna ferruginea*), Մորուքավոր Արծվանգղ (*Gypaetus barbatus*), Գիժանգղ (*Neophron percnopterus*); Քարարծիվ (*Aquila chrysaetos*), Փոքր Արծիվ (*Aquila pomarina*), Գաճաճ Արծիվ (*Hieraetus pennatus*), Օձակեր Արծիվ (*Circus gallicus*), Կրետակեր (*Pernis apivorus*), Տափաստանային Ճուռակ (*Buteo rufinus*), Մարգագետնային Մկնաճուռակ (*Circus pygargus*), Սապսան (*Falco peregrinus*), Տափաստանային Հողմավար Բազե (*Falco naumanni*), Բվեճ (*Bubo bubo*), Փոքր Առտույտ (*Calandrella brachydactyla*):

Սողուններ. Հայկական լեռնատափաստանային իժ *Vipera eriwanensis* (հոմանիշներ՝ *Vipera ursinii*, *V. u. eriwanensis*), Պալլասի մազլցող սահնօձ *Elaphe sauromates* (հոմանիշներ՝ *Elaphe quatorlineata*, *E. q. sauromates*):

Ձկնատեսակներ. 1130 *Aspius aspius*; 6168 *Luciobarbus comizo*; 1146 *Sabanejewia aurata*

Անողնաշարավորներ. 6199 *Euplagia quadripunctaria*

Բուսատեսակներ. 4067 *Echium russicum*

3. Ինչպիսի՞ բացասական ազդեցություններ կարող են լինել քննարկվող տեսակ/ներ/ի կամ բնակմիջավայր/եր/ի վրա:

- Բնակմիջավայրերի ուղիղ ոչնչացում հողային աշխատանքների և տեղանքի մաքրման ընթացքում (599 հա), հողի վերին շերտի պահեստավորում (40 հա), կույտային տարրավազման հարթակի կառուցում (165 հա), բաց ապարների լցակույտ (139 հա), աշխատողների ճամբար (6,3 հա), ճանապարհներ (79 հա), հոսքագծեր, տեղափոխման գծեր, ADR գործարան և այլն:

- Բնակմիջավայրերի վիճակի վատթարացում փորելու և պայթյունների հետևանքով առաջացած փոշու և տրանսպորտային միջոցների արտանետումների պատճառով (691 հա), օտար տեսակների ներմուծում, էրոզիա, ջրի աղտոտում, մակերեսային և ստորգետնյա ջրի հիդրոլոգիայի փոփոխում:

- Կենդանիների և բույսերի ուղղակի ոչնչացում կառուցման և շահագործման ընթացքում մեքենաների կողմից, բախումների արդյունքում և այլն:

- Վերարտադրման, բազմացման և ձմեռային արեալների ուղղակի ոչնչացում /ներառյալ կերակրման տարածքներ/:

- Բնակմիջավայրերի վատթարացում հողի օգտագործման փոփոխման պատճառով (արոտավայրերի պակաս), փոփոխված տոպոգրաֆիա և հիմք, հիդրոլոգիական ռեժիմի փոփոխում, արտահոսքեր, և այլ տեսակի աղտոտումներ:

- Պոպուլացիաների մասնատում ենթակառուցվածքների և Ամուլսար լեռան կենսամիջանցքի ցանկապատման պատճառով:

- Տեսակների պոպուլացիաների խախտում և որսագողության աճ՝ շուրջօրյա լույսի և աղմուկի պատճառով, ինչպես նաև բնակմիջավայրի թափանցելիության աճ՝ ամբողջ տարի օգտագործվող ճանապարհների և մարդկանց ներկայության պատճառով:

- Կումուլատիվ ազդեցություն հանքարդյունաբերական այլ նախագծերի հետ՝ գործող 8 մետաղական հանք Հայաստանում:

4. Արդյո՞ք գիտեք, արդյո՞ք հնարավոր ազդակիր տեսակները կամ բնակմիջավայրերը նաև պաշտպանվում են այլ միջազգային կոնվենցիաների շրջանակներով (օրինակ՝ Ռամսարի կոնվենցիա, Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին կոնվենցիա, Բարսելոնայի կոնվենցիա, ACCOBAMS, և այլն), կամ արդյո՞ք տարածքը ճանաչվել է որպես ՆԱՏՈՒԴԱ 2000/Էմերալդ ցանցի մաս:

3 Էմերալդ ցանցի տարածք և 3 կարևոր տարածք թռչունների համար՝ «Ջերմուկ», «Գորհայք տարածք» և «Սևանա լիճ»

Միջազգային կարևորություն ունեցող մեկ ջրային մարմին Ռամսարի կոնվենցիայի համաձայն Սևանա լիճ

3 կաթնասուն, 6 թռչուն, 1 սողուն և 14 բույս, որոնք ունեն հետևյալ կարգավիճակները ըստ ԲՊՄՄ կարմիր գրքի՝ կրիտիկական վիճակում գտնվող՝ CR, վտանգված տեսակ՝ EN, խոցելի տեսակ՝ VU կամ մոտ սպառնալիքի տակ գտնվող տեսակների խմբին անցմանը՝ NT:

1 առաջարկվող կենսաբազմազանության առանցքային տարածք - «Ջերմուկ-Եղեգիս»՝ 76286 հա:

5. Արդյո՞ք ձեր բողոքի սուբյեկտի կապակցությամբ առկա են ընթացքի մեջ գտնվող ընթացակարգեր ազգային կամ միջազգային մակարդակով:

2012թ. ամբողջ «Ջերմուկ» էմերալդ տարածքը առաջարկվել է որպես ազգային պարկի տարածք, բայց ընթացակարգը կանգնեցվել է Բնապահպանության նախարարության կողմից:⁴

2017թ. Համաշխարհային բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիան դուրս եկավ նախագծից տեղի բնակիչների ցույցերից հետո:⁵ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) դեռ ֆինանսավորում է նախագիծը:

2018թ. ՀՀ վարչապետի հրամանով ստեղծվել է հանքարդյունաբերական խնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ, որը, սակայն, ակտիվ չէ 2018թ-ից հետո: 13 փորձագիտական կարծիք է ներկայացվել Ամուլսարի նախագծի վերաբերյալ:

2019թ.՝ Կենսաաշխարհագրական սեմինարների ժամանակ, ՀՀ-ն նշել է, որ մտադիր է փոփոխել էմերալդի ցանցը, և հնարավոր է, որ տարածքների որոշ մասեր կրճատվեն:

⁴ <https://www.ecolur.org/files/uploads/pdf/jermuknationalpark.pdf>

⁵ <https://tinyurl.com/ybqu8lwf>